Երկրորդ ընթերցում

Նախագիծ

Կ-857[9]-09.11.2015-ՏՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Թանկարժեք մետաղների մասին» Հայաստանի Հանրապետության 2006 թվականի մայիսի 23-ի ՀՕ-83-Ն օրենքի (այսոհետ՝ օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասից հանել «, «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով» բառերը:

Հոդված 2. Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասում «լիցենզավորումը և» բառերը հանել, իսկ 2-րդ մասի «ա» կետում «լիցենզիա ունեցող» բառերը փոխարինել «գործունեության իրականացման վերաբերյալ ծանուցում ներկայացրած» բառերով:

Հոդված 3. Օրենքի 7-րդ հոդվածի՝

1. 1-ին մասի երկրորդ պարբերությունը հանել:

2. 3-րդ մասում «լիցենզավորող մարմինը» բառերը փոխարինել «լիազոր մարմինը» բառերով՝ ըստ համապատասխան հոլովաձևերի:

Հոդված 4. Օրենքի 9-րդ հոդվածում «լիցենզիա ունեցող» բառերը փոխարինել «գործունեություն իրականացնող» բառերով, իսկ 4-րդ մասում «լիցենզիա ունեցող» բառերը փոխարինել «գործունեության իրականացման ծանուցում ներկայացրած» բառերով:

Հոդված 5. Օրենքի գլուխ 3-ի վերնագիրը շարադրել հետեւյալ խմբագրությամբ «ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԻՐԵՐԻ ՀԱՐԳՈՐՈՇՄԱՆ ԵՎ

ՀԱՐԳԱԴՐՈՇՄՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԾԱՆՈՒՑԵԼԸ»:

Հոդված 6. Օրենքի 11-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Հոդված 11. Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման, հարգադրոշմման գործունեության իրականացման վերաբերյալ ծանուցումը

1. Ցանկացած անձ, որը ցանկանում է զբաղվել թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման, հարգադրոշմման գործունեությամբ պարտավոր է այդ մասին ծանուցել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությանը:

2. Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման եւ հարգադրոշմման, մանրածախ առուվաճառքի նկատմամբ ստուգումներն ու հսկողությունն իրականացնում է լիազոր մարմինը՝ փաստաթղթային հսկողության եւ տեղում ստուգումների միջոցով: Դրանց արդյունքներով կիրառվում են օրենքով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3. Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման եւ հարգադրոշմման գործունեություն իրականացնելու վերաբերյալ ծանուցում ներկայացրած անձին հաշվառելուց հետո՝ 15-օրյա ժամկետում, լիազոր մարմինն այդ մասին տեղյակ է պահում Հայաստանի Հանրապետության մաքսային մարմիններին՝ վերջիններիս տրամադրելով թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման եւ հարգադրոշմման գործունեությամբ զբաղվող անձանց տարբերանիշերի արտատիպերը:

Հոդված 7. Օրենքի 12-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«Հոդված 12. Սույն օրենքի խախտումների համար կիրառվող պատասխանատվության միջոցները

Սույն օրենքի խախտման դեպքում լիազոր մարմինը կիրառում է պատասխանատվության հետեւյալ միջոցները՝

ա) տուգանք.

բ) ծանուցում ներկայացրած անձի ծանուցման ենաթակա գործունեությամբ զբաղվելու իրավունքի կասեցում.

գ) ծանուցում ներկայացրած անձի ծանուցման ենաթակա գործունեությամբ զբաղվելու իրավունքի դադարեցում.

դ) մասնագիտական որակավորումից զրկում:»:

Հոդված 8. Օրենքի 14-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«Հոդված 14. Ծանուցված գործունեության կասեցումը

1. Լիազոր մարմինը իրավասու է կասեցնել ծանուցում ներկայացրած անձի ծանուցման ենաթակա գործունեությամբ զբաղվելու իրավունքը «Գործունեության իրականացման ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում, ինչպես նաև, եթե՝

1) խախտվել է սույն օրենքի 6-րդ հոդվածի երրորդ, չորրորդ, իններորդ եւ տասներորդ մասերով սահմանված պահանջներից որեւէ մեկը.

2) խախտվել է սույն օրենքի 9-րդ հոդվածի երկրորդ մասի «ա» կետով սահմանված պահանջը.

Հոդված 9. Օրենքի 15-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 10. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ 1-ԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ», «ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ԱՆԱՍՆԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ԴԵՂԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՐԿԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ» ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

հ/հ	Առարկության, առաջարկության հեղինակը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն

1.	**ՀՀ կառավարություն**	1. ««Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 3-րդ հոդվածից հանել «18.1-րդ» բառը, իսկ 6-րդ հոդվածի 2-րդ մասում «ծանուցված գործունեությունը» բառերը փոխարինել «ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունքի» բառերով:	1. Ընդունվել է: Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:
2.	**ՀՀ կառավարություն**	2. ««Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին » ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդվածում «առանց ծանուցման» բառերը փոխարինել «առանց ծանուցման իրավունքի ձեռք բերման» բառերով:	2. Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:
3.	**ՀՀ կառավարություն**	3. ««Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդվածում «առևտրի իրականացման վայրի կազմակերպման վերաբերյալ ծանուցում ներկայացրած» բառերը փոխարինել «առևտրի իրականացման վայրի կազմակերպման իրականացման իրավունքի ձեռք բերած» բառերով, իսկ 6-րդ հոդվածի 5-րդ մասում «առևտրի իրականացման վայրում» բառերից առաջ լրացնել	3. Ընդունվել է: Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:

		«ծանուցման մեջ նշված» բառերը:	
4.	**ՀՀ կառավարություն**	4. ««Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասում «ծանուցում ներկայացված անձանց հաշվառելու» բառերը փոխարինել «ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունքի ձեռք բերման» բառերով:	4. Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: